# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N4

## ՀՀ ԷԵԲՊՆ ՋՏՊԿ «Ջրառ» ՓԲԸ-ի կարիքների համար ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-Ջ-ԳՀԱՊՁԲ-18/29 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով քսայուղերի ձեռքբերման գնահատող հանձնաժողովի որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի գնահատման նիստի

ք. Երևան

17 հոկտեմբերի 2018 թ.
ժամը՝ 11:00

***Մասնակցում էին.***

Հանձնաժողովի նախագահ՝ **Ա. Բեգլարյան** (համակարգում՝ ԳՊ/ԳԱՊ Գնման Պատասխանատու/ Գնահատման Աշխատակազմ, գնահատման հանձնաժողովի ղեկավար)

Անդամներ՝ **Ա. Ջալադյան** (համակարգում՝ ԳՊ/ԳԱ Գնման Պատասխանատու/ Գնահատման Աշխատակազմ)

**Ս. Մելքոնյան** (համակարգում՝ ԳՊ/ԳԱ Գնման Պատասխանատու/ Գնահատման Աշխատակազմ)

**Ա. Գևորգյան** (համակարգում՝ ԳՊ/ԲԱ Գնման Պատասխանատու/ Բացման Աշխատակազմ)

**Բ. Եդիգարյան** (համակարգում՝ ԳՊ/ԲԱ Գնման Պատասխանատու/ Բացման Աշխատակազմ)

Հանձնաժողովի քարտուղար **Ն. Նիկոլայան** (համակարգում՝ ԳՊ/ՄՀՄ՝ Գնման Պատասխանատու /Մրցույթի համակարգող )

1. **Որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի գնահատման մասին**

---

(Ա. Բեգլարյան)

Ընդունել ի գիտություն՝

- Հրավերով սահմանված կարգով 1-ին տեղ զբաղեցրած մասնակցից՝ «Մոսէսքո» ՍՊԸ-ից, պահանջվել են առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը:
- Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ:

Հրավերով սահմանված ժամկետում ստացվել են մասնակցից պահանջվող փաստաթղթերը, իսկ հարցման վեաբերյալ եզրակացությունը հրավերով սահմանված ժամկետում չի ստացվել:

***1. Գնահատող հանձնաժողովն ուսումնասիրեց՝***

1. Մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը՝ առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագիրը և անհամապատասխանություններ չհայտնաբերեց:

Մասնակցի որակավորումը «Մասնագիտական փորձառություն» չափանիշի մասով գնահատվել է բավարար:

2. Մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված չէ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Մասնակցի որակավորումը «Մասնակցության իրավունք» չափանիշի մասով գնահատվել է բավարար:

3. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ի 44-րդ կետը, ինչպես նաև ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-Ջ-ԳՀԱՊՁԲ-18/29 ծածկագրով հրավերի 7.15 կետը, մասնակցի որակավորում «Ֆինանսական միջոցներ» չափանիշի մասով գնահատվել է բավարար:

Գնահատման արդյունքներն ամփոփված են գնահատման թերթիկներում:

**Գնահատող հանձնաժողովը որոշեց՝**

1.«Մոսէկքո» ՍՊ ընկերության հայտը գնահատել բավարար:

2. 1 -ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչել «Մոսէկքո» ՍՊԸ-ին:

3. Ընտրված մասնակցին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

**2.Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրվա, ժամի և վայրի մասին**

---

(Ա. Բեգլարյան)

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստ հրավիրել պայմանագիրը կնքվելու կամ չկնքվելու այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող աշխատանքային օրվա ժամը 10:00-ին, ք. Երևան, Վարդանանց փակուղի 8ա 6-րդ հարկ, հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

| | | |
|---|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | _______________ | Ա. Բեգլարյան |
| Անդամներ՝ | _______________ | Ա. Ջալադյան |
| | _______________ | Ս. Մելքոնյան |
| | _______________ | Ա. Գևորգյան |
| | _______________ | Բ. Եդիգարյան |
| Հանձնաժողովի քարտուղար | _______________ | Ն. Նիկոլյան |